Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1112[3]-04.04.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 158-րդ հոդվածի՝

1.20-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերից դուրս, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ վաճառք իրականացնելը՝

Առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:»:

2. 23-րդ մասում «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 169.16-րդ հոդվածում՝

1. 4-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առանց թույլտվության հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը՝»:

2. 4-րդ մասից հետո լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ՝

«Առանց թույլտվության խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը՝

Առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 2-րդ մասում «և 21-րդ մասերի» բառերը փոխարինել «,21-րդ, 26-րդ և 27-րդ մասերի» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 244.7-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1. Հոդվածի վերնագրում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ» բառերը փոխարինել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ» բառերով:

2. 1-ին մասում՝

1)«Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության Հայաստանի Հանրապետության որակի տեսչությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը» բառերով:

2)«քսաներեքերորդ» բառը հանել:

3.Նույն հոդվածում լրացնել նոր 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության համապատասխան մարմինները քննում են սույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 26-րդ և 27-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:»

Սույն մասով նախատեսված գործերով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի (ունեն) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը կամ նրա լիազորած պաշտոնատար անձը (անձիք):»:

Հոդված 5. Օրենսգրքի 327.1-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 5-րդ մասը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթեցում անցած «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

NN	Առաջարկության հեղինակը	Առաջարկությունների և դիտողությունների բովանդակությունը	Արդյունքը
1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	1.Դիտողությունները և առաջարկությունները վերաբերում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին համապատասխան մասերի, կետերի համարակալումները համապատասխանեցնելուն և խմբագրելուն: 2. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը միմյանց չեն համապատասխանում, մասնավորապես՝ 1-ին մասի համաձայն համայնքի ղեկավարը տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն: Մինչդեռ նշված թույլտվության մասով հոդվածի 2-րդ մասում բացառություն է սահմանվում: Ուստի առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը խմբագրել՝ համապատասխանեցնելով 1-ին մասի դրույթներին:	Առաջարկություններն ընդունվել են: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Առաջարկությունն ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: